



**KPMG Armenia cjsc**  
 8<sup>th</sup> floor, Erebuni Plaza Business Center,  
 26/1 Vazgen Sargsyan Street  
 Yerevan 0010, Armenia

**Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա ՓԲԸ**  
 ԳՅ, Երևան, 0010  
 Վ.Սարգսյանի փ. 26/1,  
 «Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,  
 8-րդ հարկ

Telephone Գեռախոս + 374 (10) 566 762  
 Fax Ֆաքս + 374 (10) 566 762  
 Internet Ինտերնետ www.kpmg.am

**Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ**

«Առաջին Հիփոթեքային Ընկերություն» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ Տնօրենների խորհրդին

Կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և համապատասխան ծանոթագրությունը, պատրաստվել են «Առաջին Հիփոթեքային Ընկերություն» Ունիվերսալ Վարկային Կազմակերպություն ՍՊԸ-ի («Կազմակերպություն») 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա: Մենք արտահայտել ենք դրական կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ 2015թ. փետրվարի 17-ի մեր աուդիտորական եզրակացությունում:

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների ընթերցումը չի փոխարինում Կազմակերպության աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների ընթերցմանը:

*Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա ամփոփ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար՝ ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է կարծիք արտահայտել ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ հիմք ընդունելով այն ընթացակարգերը, որոնք իրականացվել են Աուդիտի միջազգային ստանդարտ 810 «Եզրակացության ներկայացում ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ» պահանջների համաձայն:

*Եզրակացություն*

Մեր կարծիքով, Կազմակերպության 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունների հիման վրա պատրաստված ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, համապատասխանում են նշված ֆինանսական հաշվետվություններին՝ ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

Տիգրան Գասպարյան  
 Տնօրեն



Տիգրան Գասպարյան  
 Գործընկեր

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ  
 17 փետրվարի 2015թ.

